

ԱՅԷՆՔԻ «ՆՈՐ ԿԵԱՆՔ» ԷՆ

ՅՈՒՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԴՄՈՒՄԸ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՎԻՆ

ՆՈՐԱԿԱԶՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԻԱՆՑ ՊԱՇՏՊԱ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ
ՀԵՏԵԻԵԱԼ ՀԵՌԱԳԻՐԸ ՅՂԱԾ Է ՄՈՍԿՈՒԱ, ԵՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ

Մերք Արսաֆին Գործոց Նախարարներ Խորհրդատու լինք,
Արսաֆին Գործավարութեան միջոցաւ

ՄՈՍԿՈՒԱ

Առաջին համաշխարհային պատերազմին, բքական ջարդերէ վերապրող Յունահայ գաղթականներ, որ դոնն ենք եղած եւրոպական քաղաքական շահերու հակամարտութեանց, մեր ձայնը կը միացնենք այլ երկիրներու մէջ առաւարտներ ազգակիցներուն, խնդրելով ձեր վսեմութենէն արդարունն և կցումի արտօնութիւն Սովետ Հայաստանի հանրապետութեան, թրքահայ հողամասերուն ուսկից կողոպտուած և բռնագթի ենթարկուած մէկուկէս միլիոն գաղթահայեր, անհամբերութեամբ կը սպասենք Սուրիոյ, Իրաքի, Պարսկաստանի և այլ երկիրներու մէջ վերագառնալու համար մեր հայրենիքը, պաշտօնաւ միացած Սովետ Հայաստանի հանրապետութեան:

Մենք կը հաւատանք թէ համաշխարհային ազատութիւնը ապահովուած չըլլար մինչեւ որ Հայերուն արտ պահանջներուն դոնացում չարուի, որոնք ընդունուած էին քր ազգերու կողմէ և նուիրագործուած միջազգային բաղմաթիւ սրհրդածողոյններով և դաշնագիրներով:

Յարդ հայկական արդար պահանջները մի ունակոյս եղած են թուրքերու կողմէ, «իրաւունքը զօրաւոր» սկզբունքին համաձայն և եւրոպական հակամարտ շահերուն պատճառաւ: Բայց այս անգամ արդարութիւնն ու բամկապետունը ներկայացնող երեք զօրաւոր ներկայացուցիչներդ պիտի վարանիք «իրաւունքը զօրաւորին» սկզբունքը ջնջել, եւ հհանգէք պարպելու թրքահայ պատմական գաւառները:

Այս է մեր և խաղաղութիւնը սիրող բոլորգգերու խնդրանքն ու փափաքը:

Հայկական Իրաւանց Պատասխանձնախումբի
Քարտուլար Խազահ
Վ. ԴԱԳԷՍԵԱՆ ՏՕԲԹ. Գ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

16 Դեկտեմբեր 1945